ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ЧАМБАРАКСКАЯ ГОРОДСКАЯ МЭРИЯ
REPUBLIC OF ARMENIA GEGHARKUNIK DISTRICT CHAMBARAK
COUNSUL
08100711

/0265/2 22 55
chambarakcityhall@rambler.ru

N 25

«30» 01. 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
պ-ն. Ն.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ

Ձեզ է ներկայացվում Ճամբարակ համայնքի ավագանու 27.01.2012թ. թիվ 1 նիստի N 01, N 02, N 03, N 04, N 05 որոշումները:
Առդիր՝ 6 /վեց/ թերթ:

Քաղաքապետ Յու.Ավալյան

Մուտքի թիվ 582-12
06 02 2012թ

Կատ.Ֆ.Սարգսյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

« 27» հունվարի 2012թ. N 1

1. ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
2. ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻՑ ՄԵԿ ՍԵՆՅԱԿ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ Հ ՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ԱՎԱԼՅԱՆ

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2012թ. N 01 -Ն

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի 2012 թվականի բյուջեն

ա/ եկամուտների գծով - 117223,5 հազար դրամ
բ/ ծախսերի գծով - 131482,9 հազար դրամ
գ/ դեֆիցիտը՝/պակասորդը/ - 14259,4 հազար դրամ

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուեջի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի:
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեն միջոցների տարեվերջյան հավելուրդը կամ դիֆիցիտը /պակասորդը/ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դիֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 6-ի:
8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
ա/ Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.
բ/ Սահմանել, փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 տոկոսը:
9. Վարչական բյուջեի տարեսկզբի 8763,7 հազար դրամ ազատ մնացորդը ուղղել ֆոնդային բյուջե:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ – 9, դեմ – 0, ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ

Ն.Սարգսյան — Ն. Սեանցյան
Հ.Հարությունյան — Կ.Բալյան
Գ.Խաչատրյան — Վ.Աղամյան
Թ.Խեչոյան — Ն.Աղաջանյան
Ա.Զաքյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«27» հունվարի 2012թ. N 02-Ա

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻՑ ՄԵԿ ՍԵՆՅԱԿ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Նոտարիատի մասին» օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համաձայնություն տալ՝
Համայնքի քաղաքապետարանի շենքից մեկ սենյակ 17 քմ. անհատույց օգտագործման համար հատկացնել ճամբարակի նոտարական տարածքին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ – 9, դեմ – 0, ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ

| | |
|---|---|
| Ն.Սարգսյան | Ն. Սևանյան |
| Հ.Հարությունյան | Կ.Բայյան |
| Գ.Խաչատրյան | Վ.Աղամյան |
| Թ.Խեչոյան | Ն.Աղաջանյան |
| Ա.Զազյան | |

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2012թ. N 03 -Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒՆ ԿԻՑ 300 ՔՄ. ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ, 68-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի կենտրոնական զբոսայգուն կից, 300քմ. հողամասը բանկային մասնաշենք կառուցելու նպատակով աճուրդ-վաճառքի՝ միջոցով օտարել, պայմանով, որ տվյալ տարածքին հարակից 600 քմ. բարեկարգման /սալիկապատման/ աշխատաքները կատարվի աճուրդի հաղթող մասնակցի հաշվին:
   Մեկնարկային գինը 66600 /վաթսունվեց հազար 600 դրամ/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 9, դեմ – 0, ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ

| | |
|---|---|
| Ն.Սարգսյան | Ն. Սևանյան |
| Հ.Հարությունյան | Կ.Բալյան |
| Գ.Խաչատրյան | Վ.Ադամյան |
| Թ.Խեչոյան | Ն.Աղաջանյան |
| Ա.Զազյան | |

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2012թ. N 04 -Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ Հ ՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը նշեց, որ կատարված ուսումնասիրությունից պարզվել է ճամբարակ համայնքի կադաստրային քարտեզում որպես «անհայտ» նշված քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասեր՝ 531 հա վարելահողերը և 282.52 հա խոտհարքները տարիներ շարունակ չեն օգտագործվել, չեն տիրապետվել, և գտնվել են բարձիթողի վիճակում:

Յու. Ավալյանը առաջարկեց հաշվի առնելով, որ վերը նշված հողամասերի նկատմամբ գոյություն չունի իրավունքը հաստատող որևէ փաստաթուղթ, և դրանց նկատմամբ պետական գրանցում, որպես քաղաքացիների սեփականություն իրականացված չէ, դարձնել համայնքի սեփականություն:

| Հ/հ | Տեղամաս | Վարելահող /հա/ | Խոտհարք /հա/ |
|---|---|---|---|
| 1 | Ն.ճամբարակ | 97 | 25.4 |
| 2 | Վ.ճաբարակ | 20.4934 | 11.0612 |
| 3 | Կրասնոսելսկ | 413 | 246.0588 |
| | Ընդամենը | 531 | 282.52 |

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ կետով և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի մոտ կայացած խորհրդակցության 27.04.2010թ., N Ե-27-0 արձանագրության 6-րդ կետի սահմանված կարգով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համաձայնություն տալ՝
Համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության անհայտ 531 հա վարելահողերը և 282.52 հա խոտհարքները դարձնել համայնքի սեփականություն և վերցնել համայնքի հողային հաշվեկշիռը /հավելված 1/:

2. Քաղշին բաժնի պետ Վ.Դանիելյանին պարտադրել անհրաժեշտ փաստաթղթերը որոշման օրինակի հետ ներկայացնել կադաստրային ստորաբաժանում սահմանված կարգով պետական գրանցում ստանալու համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ս.Ավալյանի վրա:

Կողմ – 9, դեմ – 0, ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ

| | |
|---|---|
| Ն.Սարգսյան | Ն. Սևանյան |
| Հ.Հարությունյան | Կ.Բալյան |
| Գ.Խաչատրյան | Վ.Ադամյան |
| Թ.Խեչոյան | Ն.Առաքանյան |
| Ա.Զաքյան | |

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2012թ. N 05-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ, 13-րդ կետերով և 37-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով համայնքի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ շենք-շինությունները աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի

| Հ/հ | Տարածքի հասցեն | Մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տ.Մեծի - 9-42 | 24.0 | 110000 |
| 2 | Տ.Մեծի - 13-43 | 26.0 | 120000 |
| 3 | Տ.Մեծի - 24-17 | 40.7 | 225000 |
| 4 | Տ.Մեծի - 9-43 | 25.6 | 115000 |
| 5 | Տ.Մեծի - 9-56 | 28.4 | 130000 |
| 6 | Տ.Մեծի - 13-51 | 12.8 | 58000 |
| 7 | Թումանյան 46/1 | 72.7 | 520000 |
| 8 | Տ.Մեծի - 13-48 | 24.6 | 112000 |
| 9 | Սեպտեմբերի 21-ի 2-47 | 8.5 | 68000 |
| 10 | Տ.Մեծի - 13-49 | 40.5 | 185000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 9, դեմ – 0, ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ

| | |
|---|---|
| Ն.Սարգսյան | Ն. Սևանյան |
| Հ.Հարությունյան | Կ.Բալյան |
| Գ.Խաչատրյան | Վ.Աղամյան |
| Թ.Խեչոյան | Ն.Աղաջանյան |
| Ա.Զազյան | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ԱՎԱԼՅԱՆ